

5.3.2 Մարդահամարային կադրերի հավաքագրում

ԼՂՀ 2015 թ. մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման աշխատանքների ժամանակացույցի համաձայն՝ նախապատրաստական աշխատանքների հաջորդ փուլով իրականացվեց կազմալուծում հաստատված ժամանակավոր աշխատողների հավաքագրումը:

ԼՂՀ ԱՎԾ շրջանային բաժիններում առանձնացվեցին մարդահամարի աշխատանքները համակարգողների ժամանակավոր հաստիքներ՝ 6 ամսով: Այդ հաստիքով ներգրավվեցին թվով 6 մարդ: Ժամանակավոր աշխատողների հաջորդ հարթությունով նախատեսված էր մարդահամարի տեղամասի վարիչների և նրանց օգնականների հավաքագրումը 2.5 ամսով: Այդ նպատակով հավաքագրվեցին 18 ժամանակավոր աշխատողներ՝ մարդահամարի տեղամասի 9 վարիչներ և նույնքան էլ նրանց օգնականներ:

Թվով 99 (ներառյալ ռեզերվը) հրահանգիչ-հսկիչների համար աշխատանքը նախատեսված էր 1.5 ամսով, իսկ 527 հաշվարարներինը (ներառյալ ռեզերվը)՝ 1 ամսով: ԼՂՀ ԱՎԾ շրջանային բաժինների կողմից ժամանակավոր աշխատողների ընտրությունն իրականացնելիս հաշվի առնվեց համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առաջարկված թեկնածուները: Նշված կադրերի հավաքագրման ժամանակ առավելություն տրվեց բարձրագույն կրթություն ունեցողներին՝ դպրոցի ուսուցիչների, ուսանողների, ինչպես նաև չաշխատող բնակչության համապատասխան որակավորում ունեցող անձանց: Առավելություն տրվեց նաև նախկին մարդահամարների, հետազոտությունների և ընտրությունների աշխատանքներին մասնակցած անձանց: Կադրերի ընտրության ժամանակ հաշվի առնվեց նաև այն հանգամանքը, որ թեկնածուները չհանդիսանան ֆիսկալ և քվազիֆիսկալ գործառույթներ իրականացնողներ, քանի որ բնակիչները կարող էին խուսափել նման հաշվարարների հետ հանդիպելուց կամ կաշկանդված լինել մարդահամարի հարցաթերթերի հարցերին պատասխանելիս: